Միոտանի ըմբիշը հաղթել է ԱՄՆ-ի առաջնությունը

Ըմբշամարտի ԱՄՆ-ի ուսանողների առաջնության հաղթող է ճանաչվել էնթոնի Ռոբլես անունով միոտանի ըմբիշը:

Սևամորթ մարզիկն ի ծնե ապրում է մեկ ոտքով, սակայն այդ հանգամանքը նրան չի խանգարել հաղթել երկրի առաջնությունը, որին մասնակցողները, բացի իրենից, բոլորը ֆիզիկապես լիարժեք են եղել:

Պարզվում է, մեկ ոտքի բացակայությունը երբեմն կարող է ունենալ մի շարք առավելություններ:

Առանց լրացուցիչ քաշի, որը տալիս է ոտքը (ոտքի քաշը կազմում է մարդու քաշի 1/5 մասը), Ռոբլեսը ստանում է հնարավորություն, ավելացնելով իրանի ծավալը և ուժը՝ դրանով իսկ դառնալով իր հակառակորդներից ավելի հզոր, մնալ նույն քաշային կատեգորիայում:

Չկարողանալով կռվել կանգնած դիրքում, էնթոնին ստիպում է իր հակա



ռակորդին շարունակել մարտը գետնի վրա, որտեղ, յուրատեսակ տեխնիկայի կիրառման արդյունքում, նա դառնում է անգերազանցելի:

Բացի այդ, Ռոբլեսի խոստովանությամբ, շնորհիվ այն բանի, որ նա տեղաշարժվում է հենակների օգնությամբ, իր դաստակները և ուսերը մշտապես գտվում են աշխատանքի մեջ:

- Ես ինձ հաշմանդամ չեմ զգում: Ծնողներս ինձ խստության մեջ էին դաստիրակում և երբևէ արտոնություններ չէին տալիս:

Ես միշտ հավատացել եմ, որ կկարողանամ հասնել իմ առջև դրված ցանկացած նպատակին: Իսկ ըմբշամարտից պարզապես իրական հաճույք եմ ստանում և ձգտում եմ հասնել բարձր ցուցանիշների,- ասում է էնթոնի Ռոբլեսը:

Աղբյուր՝ www.1in.am

Հումոր

Մեզ մոտ մարդուն սկզբում հաշմանդամ կդարձնեն, հետո նոր կսկսեն տրանսպորտում տեղ զիջել:

Խուլ վիրաբույժը հիվանդներին չի ցավազրկում:

Գլխավոր բժիշկը՝ սանիտարին.

- Հոմ չե՞ս գժվել: Յոթերորդ պալատի հիվանդին ինչո՞ւ ես ասել, որ ոտքերն անդամահատելու ենք:

- Որ ստիպեմ նրան քայլել:

Պրեզիդենտագրքում են հաշմանդամները

Վրձնի թեթև շարժումով..

Արվեստի շունչը զգալը, աշխարհը ստեղծագործաբար ընկալելը՝ դա անշուշտ այն հատկություններն են, որոնք տրվում են ի վերուստ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է այդ հատկությունները մարդկանց մեջ բացահայտել և զարգացնել: Փորձը ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց շրջանակում արվեստով զբաղվելու ձգտումն բավականին մեծ է: Այս պարագայում, «Ունիսոն» հասարակական կազմակերպությունում գործող կերպարվեստի ստուդիան օգնում է իր սաներին տեսնել աշխարհը իր հարուստ գունային երանգավորման մեջ:

Ստուդիան գործում է 2003 թվականից, և այդ ժամանակվանից ի վեր այստեղ հաճախող հաշմանդամների ստեղծագործությունները ներկայացվել են տարբեր ցուցահանդեսներին:

2009 թվականից ստուդիայի ղեկավարի պաշտոնը ստանձնեց ՀՀ Նկարիչների միության անդամ, գեղանկարիչ Գեղամ Գուլիկյանը, որի կարևորագույն մանկավարժական հատկանիշներից մեկը հանդիսանում է այն, որ

նա զարգացնում է յուրաքանչյուր աշակերտին բնորոշ ժանրային, ոճային առանձնահատկությունները, զգում է անհատի կերպարային աշխարհը: Կերպարվեստի ստուդիայի աշխատանքային միջավայրում մշտապես տեղի է ունենում սաների միջև փորձի փոխանակման գործընթացը:

2010 թվականի նոյեմբերի 30-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ առաջին ցուցահանդեսը, որին ներկայացված էին միայն «Ունիսոնի» ստուդիայի աշխատանքները (հեղինակներ՝ Քրիստինե Խաչատրյան, Փիրուզա Շահբազյան, Եվգենիա Հարությունյան, Քրիստինե Մելքոնյան, Աննա Թադևոսյան, Քրիստինե Օսիպյան, Հակոբ Հարությունյան, Սոնա Հակոբյան): Նատյուրմորտ, բնանկար, դիմանկար՝ ժանրային այսպիսի բազմազանության տիրույթում հայտնվեց հանդիսատեսը:

Կտավների հեղինակների արտահայտչամիջոցները նույնպես տարբեր էին՝ պուանտիլիզմ, կուբիզմ, կոլաժ և այլն: Այս առաջին ցուցահանդեսը մեծ ոգևորություն հաղորդեց երիտասարդ գեղանկարիչներին, քանի որ յուրաքանչյուր արվեստագետի համար իր ստեղծած աշխատանքը հասարակության հետ շփման, սեփական գաղափարների տարածման կարևորագույն միջոց է:

Մարիաննա Չալիկյան

Գլխավոր Խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ,
Երևան՝ 0002, Դեմիրճյան 36

Հեռ./Ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
Էլ.փոստ՝ unison@unison.am

№3 (18)
Ապրիլ-հունիս

Մենք հավասար ենք

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Հանուն առավելագույն ներառման

Ներառում... ի՞նչ է նշանակում այդ բառը, ինչպե՞ս են այն ընկալում Հայաստանի քաղաքացիները, հատկապես կրթական հաստատությունների ներկայացուցիչները, որքանո՞վ է ներառական կրթության համակարգը կայացած Հայաստանում:

Նմանատիպ հարցեր, դրանց արդյունավետ և բազմաբնույթ պատասխաններն ու լուծումներն էին առաջարկում Հայաստանի 4 մարզերում և Երևանում

«Հաշմանդամների կազմակերպությունների հզորացում հանուն առավելագույն ներառման» ծրագիրը Վորլդ Վիժն Հայաստանի հետ համատեղ իրականացնող ՀԿ-ները: Երևանում ներառման գործընթացի խթանիչ ուժ հանդիսացող «Ունիսոն» ՀԿ-ն աշխատանք էր տանում Քանաքեռ-Զեյթուն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դպրոցներում և մանկապարտեզներում:

Ինչպես ավանդական (դասընթաց, սեմինար, տեսանյութերի ցուցադրում), այնպես էլ նորարարական (ցուցահանդես, համերգներ, մրցույթներ, տիկնիկային ներկայացումներ) միջոցներով բարձրացվում էր այս հաստատությունների մանկավարժների, ծնողների և երեխաների իրազեկվածությունը հաշմանդամների իրավունքների, հնարավորությունների, նրանց հետ շփման և վարվելակերպի վերաբերյալ:

Ծրագրի կարևորագույն բացահայտումներից մեկը հանդիսացավ այն, որ ներառման գաղափարի ընդունմանն առավել պատրաստ են երեխաները: Այս սերունդը ոչ միայն ունակ է ներազդել իրենց շրջապատողմ եծահասակների վրա, այլ նաև վաղվա հասարակության հիմքն է և կազմավորողը: Բացի այդ, անցկացված բազմաթիվ հանդիպումները ցույց տվեցին, որ չնայած ներառման գաղափարը կյանքի կոչելու համար, բնականաբար, պահանջվում են նյութական ռեսուրսներ, սակայն, բարեփոխումների գործընթացն ամենից շատ կախված է մարդկանց ցանկությունից, պատրաստակամությունից և վերաբերմունքից:

Եվ այս առումով ծրագիրն իրապես նպաստեց հազարավոր մարդկանց մոտ կարծրատիպային վերաբերմունքի փոփոխությանը, հաշմանդամության հարցի նորովի ընկալմանը և գործնական բարեփոխումներ կատարելու ցանկության առաջացմանը:

Մարիաննա Չալիկյան

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Սույն հրապարակումն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) ֆինանսական միջոցներով: Հրապարակման մեջ արտահայտված մոտեցումները և կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ ՄԶԳ մոտեցումների և կարծիքների հետ:

World Vision

Քննարկումներ մատչելիության հարցի շուրջ

ՀՀ օրենսդրությունը հիմնականում կարգավորում է հաշմանդամների համար հասարակական նշանակության շինությունների ֆիզիկական մատչելիություն հարցը: Իսկ որքանո՞վ է դա անդրադառնում սակավաշարժուն մարդկանց կյանքի վրա:

Մարտի 31-ին «Կոնգրես» հյուրանոցում «Ունիսոն» ՀԿ-ն «Եվս մեկ անգամ մատչելիության մասին» խորագրով անցկացրեց հաշմանդամության հարցերով զբաղվող կազմակերպությունների հերթական ցանցային հանդիպումը: Կլոր սեղանի ձևաչափն ունեցող այս միջոցառումը կայացավ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ Վորլդ Վիժն Հայաստանի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում: Քննարկմանը ներկա էին արդեն մշտական «այցետոմս» ունեցող մասնակիցները՝ «Փյունիկ», «Փրկություն», HDP, այնպես էլ ցանցի աշխատանքներին վերջերս միացած մի շարք ՀԿ-ներ:

Շոշափվող թեմայի արդիականության, առկա բազմաթիվ բացերի և լուծման տարաբնույթ եղանակների մասին արտահայտվեցին բոլոր ներկաները: Հատկանշական է, որ ֆիզիկական մատչելիության խնդիրները խոչընդոտում են ամենատարբեր բնույթի հաշմանդամություն (հենաշարժողական,տեսողական, լսողական, մտավոր) ունեցող մարդկանց կրթական, զբաղվածության, առողջապահական և այլ ոլորտներում իրավունքների իրացմանը:

Ի դեպ, Մասիսից ժամանած «Արձագանք» ՀԿ-ի նախագահը նշեց, որ իրենց քաղաքում հաշմանդամների իրազեկվածության մակարդակը անմխիթարական վիճակում է, և, օգտվելով առիթից, դիմեց «Ունիսոնին»՝ Մասիսում իրավաբանական սեմինարի անցկացման խնդրանքով:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ինչպես վերոնշյալ սեմինարի անցկացման, այնպես էլ համագործակցության ամրապնդման այլ քայլերի վերաբերյալ:

Քննարկման բոլոր մասնակիցները համամիտ են այն հարցում, որ կարևորագույն խոչընդոտներից մեկը հարմարեցված հասարակական տրանսպորտի բացակայությունն է:

Կլոր սեղանի արդյունքում որոշում կայացվեց համատեղ գրությամբ դիմել Երևանի քաղաքապետին, որպեսզի ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ապագա մրցույթների ժամանակ անպայմանորեն հաշվի առնվեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց օրինական շահերը:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ

Մոտենում է հունիսի 1-ը՝ երեխաների միջազգային օրը, որին «Ունիսոնը» որոշեց անդրադառնալ յուրահատուկ ձևով: Վորլդ Վիժն Հայաստանի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում դպրոցականներին հանձնարարվեց գրել մի փոքրիկ շարադրություն, հաշմանդամների,հատկապես իրենց հասակակիցների, հասարակության մեջ ներգրավման մասին:

Աշակերտներին առաջարկվեց ըստ ընտրության մի քանի թեմա՝ «Որտե՞ղ պետք է սովորի հաշմանդամ երեխան՝ սովորական, թե՞ հատուկ դպրոցում», «Ընկերս հաշմանդամություն ունի», «Խնամել, օգնել, թե՞ բացահայտել անձի թաքնված ներուժը», «Ի՞նչ է խտրականությունը և ինչպե՞ս պայքարել դրա դեմ»: Երեխաները անկաշկանդ էին և անկեղծ իրենց կարծիքներում՝ կիսվելով հաշմանդամների մասին ունեցած պատկերացումներով, հիմնականում ձեռք բերված սեփական շփման փորձի վրա, կամ հաղորդված մեծահասակների կողմից:

Ցավալի է, որ որոշ դեպքերում հենց ծնողն է աղավաղված պատկեր ստեղծում երեխայի մոտ, ինչը դրսևորվում է, օրինակ՝ «Հաշմանդամները կարող են երեխա ունենալ, բայց ափսոս, որ նրանց երեխաները նույնպես հաշմանդամ կլինեն» և նմանատիպ այլ կարծրատիպերով:

Սակայն, հիմնականում, նյութերն արտացոլում են բոլոր երեխաների հավասարության, իրավունքների պաշտպանության սկզբունքները:

Առավել արտահայտիչ դառնալու համար հեղինակներից մի քանիսը նկարազարդեցին իրենց շարադրությունները:

Թե՛ բովանդակության, թե՛ լեզվի առումով լավագույն 15 շարադրությունների հեղինակները «Ունիսոնի» կողմից կպարգևատրվեն պատվոգրերով և մրցանակներով:

Մրցանակաբաշխության արարողությունը տեղի կունենա հունիսի 1-ին: Խորհրդանշական է, որ երեխաների միջազգային օրը խրախուսվելու են այն երեխաները, որոնք արդեն վաղ տարիքից ձգտում են պաշտպանել իրենց հասակակիցների, այդ թվում՝ հաշմանդամների իրավունքները:

Մ.Չ.

«Ունիսոն» ՀԿ-ն հաշմանդամներին առաջարկում է

- իրավաբանական խորհրդատվություն
- զբաղվածության կենտրոնի ծառայություններ
- աշխատանք գտնելու նոր հնարավորություն՝ գրանցվել **www.jobs.disability.am** կայքում

Բոլոր գործատուներին. գտե՛ք ձեր պահանջներին համապատասխանող որակյալ կադրեր www.jobs.disability.am կայքում

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական միջոցներով

Տեղեկացված լինելու իրավունքը

Վիլնյուսի փողոցներում հայտնվել են բարձրախոսներով համալրված տրոլեյբուսներ, որոնք շատ հարմար են կույր մարդկանց: Հատուկ սարքը հայտարարում է մոտեցող տրոլեյբուսի համարը և երթուղին:

Սարքը կցված է տրոլեյբուսի առջևի դռներին: Այն ակտիվացվում է հեռակառավարման վահանակի

Նման վահանակներ քաղաքային իշխանությունները արդեն բաժանել են Լիտվայի մայրաքաղաքի բոլոր կույր բնակիչներին:

Վիլնյուսում արդեն երթևեկում է 60 նման տրոլեյբուս, իսկ մինչև տարեվերջ բոլոր տրոլեյբուսները կհամալրվեն նշված բարձրախոսներով:

Հետագայում նման սարքերը կտեղադրվեն նաև ավտոբուսների վրա:

Աղբյուր՝ www.forum.ura-inform.com

Ունիվերսալ դիզայն. միջավայր բոլորի համար

«Ունիսոնի» գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը կապված է ֆիզիկական մատչելիության հարցի կարգավորման հետ:

Անարգել միջավայրի ապահովման նպատակով «Ունիսոն» ՀԿ-ն անցկացնում է դիտարկումներ, ուսումնասիրություններ, քննարկումներ, սեմինարներ, հանդիպումներ:

Վերջիններիս ընթացքում պարզվեց, որ բավականին մեծ է համապատասխան գրականության պահանջարկը, և մեր կազմակերպությունը

որոշեց լրացնել այդ բացը: 2011թ. մարտին լույս տեսավ «Ունիվերսալ դիզայն. միջավայր բոլորի համար» բրոշյուրը:

Հրապարակման առանձին բաժիններում տեղ են գտել փողոցների,

շենքերի, սանհանգույցների, տրանսպորտի հարմարեցման բազմապիսի օրինակները մանրակրկիտ բացատրություններով և նկարագրություններով: Գրքույկում ներկայացված են թե՛ այսպես, թե՛ այլ երկրներում կիրառվող տարբերակները, որոնք առավելագույնս համապատասխանում են ունիվերսալ դիզայնի պահանջներին և մեր երկրի պայմաններին:

Մարիաննա Չալիկյան

Իրավաբանի անկյուն

Հարց և պատասխան

Հաշմանդամություն ունեցող ծնողների զավակներն օգտվո՞ւմ են արդյոք որևէ արտոնություններից պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ:

Դ.Պ., 1-ին խմբի հաշմանդամ, ք.Վանաձոր

Զինապարտության մասին ՀՀ օրենքի 12 հոդվածի համաձայն՝

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:

Անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,
- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը.
- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.

բ) առանց մոր մեծացող երեխա.

գ) երկու և ավելի երեխա.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

Զորակոչիկին տարկետում տրվում է նաև վերջինիս կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության դեպքում:

2. Եթե քաղաքացին մինչև զորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել են առնվազն 5 տարի առաջ, և կա սույն հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Նույն օրենքի 11 հոդվածի համաձայն՝

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են՝

ա) միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը.

Բնակության վայրին մոտ գտնվող զորամաս է համարվում զորակոչիկի հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 100 կմ տեղակայված զորամասը:

Գայանե Խաչատրյան
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ